ԵԴ1/0940/01/24
(ՀԿԴ/0126/01/25)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25 հունիսի 2025 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/0940/01/24 (ՀԿԴ/0126/01/25) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի հունիսի 11-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2024 թվականի մայիսի 13-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Սյուզաննա Ռոբերտի Խաչատրյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով թիվ 08175823 (ԵԴ1/0940/01/24) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Դ.Արղամանյան) 2024 թվականի մայիսի 16-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0940/01/24 քրեական գործի վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 1-ին թիվ ԵԴ1/0940/01/24 քրեական վարույթով անցում է կատարել հիմնական դատալսումների փուլ:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 3-ին՝ հիմնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0940/01/24 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

3. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Ա.Գրիգորյան) 2025 թվականի հունիսի 11-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0126/01/25 (ԵԴ1/0940/01/24) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ առարկայական ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հունիսի 16-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Սյուզաննա Ռոբերտի Խաչատրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների համար, որ *«(...) նա հանդիսանալով «Ջոն Օյունջյան» կրթամշակութային հասարակական կազմակերպության և «Նորավանք սպորտային ակումբ» ՍՊ ընկերության հաշվապահը և օգտվելով այն հանգամանքից, որ իր պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս հնարավորություն է ունեցել տնօրինելու ընկերությունների բանկային հաշվեհամարները, առանց ընկերությունների նախագահ Արմեն Սերգեյի Լիսիկյանի թույլտվության և գիտության, ընկերությունների հաշվեհամարներին առկա գումարներն իր անձնական հաշիվներին փոխանցելու եղանակով հափշտակել է «Ջոն Օյունջյան» կրթամշակութային հասարակական կազմակերպության և «Նորավանք սպորտային ակումբ» ՍՊ ընկերության առանձնապես խոշոր չափերով գումարը:*

Այսպես.

Սյուզաննա Ռոբերտի Խաչատրյանը, հանդիսանալով «Զոն Օյունջյան» կրթամշակութային հասարակական կազմակերպության և «Նորավանք սպորտային ակումբ» ՍՊ ընկերության հաշվապահը և օգտվելով այն հանգամանքից, որ իր պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս հնարավորություն է ունեցել տնօրինելու ընկերությունների բանկային հաշվեհամարները, իբրև «Փոխառության տրամադրում», «Աղբահանության վճար», «Հաշվապահական հաշվառման կանխավճար», «Դրամական միջոցների տրամադրում» նպատակներով 2022 թվականի օգոստոսի 12-ից մինչև 2023 թվականի մայիսի 11-ը «Նորավանք սպորտային ակումբ» ՍՊ ընկերության «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում բացված 1570 0618 7122 0101 բանկային հաշվեհամարից իր անվամբ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում բացված 1570 0174 7169 0200 հաշվեհամարին մաս-մաս փոխանցել է ընդհանուր 87.624.000 ՀՀ դրամ, որից նույն ժամանակահատվածում «Նորավանք սպորտային ակումբ» ՍՊ ընկերության նույն հաշվեհամարին հետ է փոխանցել միայն 22.100.000 ՀՀ դրամ, իսկ 2023-ի մայիսի 8-ից մինչև 2023 թվականի մայիսի 12-ը «Զոն Օյունջյան» կրթամշակութային կազմակերպության «Արարատբանկ» ԲԲ ընկերությունում բացված 15 1000 4577 7100 հաշվեհամարից իրեն պատկանող «Այ Ֆայնենս» ՍՊ ընկերության «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում բացված 1570 0781 9137 0100 հաշվեհամարին մաս-մաս փոխանցել է ընդհանուր 9.840.000 ՀՀ դրամ, որից նույն ժամանակահատվածում «Զոն Օյունջյան» կրթամշակութային հասարակական կազմակերպության նույն հաշվեհամարին հետ է փոխանցել միայն 340.000 ՀՀ դրամ, իսկ 2023 թվականի մարտի 20-ին և մայիսի 2-ին «Զոն Օյունջյան» կրթամշակութային հասարակական կազմակերպության «Արարատբանկ» ԲԲ ընկերությունում բացված 15 1000 4577 7100 հաշվեհամարից «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում իր անվամբ բացված 1570 0174 7169 0200 հաշվեհամարին երկու մասով փոխանցել է ընդհանուր 2.000.000 ՀՀ դրամ գումար, այդ կերպ, մեկ միասնական դիտավորությամբ հափշտակելով իրեն վստահված «Զոն Օյունջյան» կրթամշակութային հասարակական կազմակերպությանը և «Նորավանք սպորտային ակումբ» ՍՊ ընկերությանը

պարկանող առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 77.024.000 ՀՀ դրամ գումարը: (…)»[1]*:*

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունիսի 3-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Ապացույցների հետազոտումն ավարտելուց հետո Դատարանը սեփական նախաձեռնությամբ քննարկման առարկա դարձրեց առարկայական ընդդատության հարցը:*

Տուժողի լիազոր ներկայացուցիչ Արսեն Արմենակյանը առարկեց գործն ըստ ընդդատության ՀՀ հակակոռուպցիոն դատարան ուղարկելու դեմ՝ հայտնելով, որ Սյուզաննա Խաչատրյանը հանցանք կատարելիս չի տիրապետել որևէ ծառայողական կամ իշխանական լիազորության, այլ գործել է մասնագիտական պարտականություններից ելնելով, ուստի գործն ըստ ընդդատության ՀՀ հակակոռուպցիոն դատարան ուղարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

Հանրային մեղադրողը առարկեց գործն ըստ ընդդատության ՀՀ հակակոռուպցիոն դատարան ուղարկելու դեմ՝ հայտնելով, որ Սյուզաննա Խաչատրյանին մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցանքի կատարում, այլ ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքի կատարում, ուստի գործն ըստ ընդդատության ՀՀ հակակոռուպցիոն դատարան ուղարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

Պաշտպանական կողմն առարկեց գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի վարույթում պահելու դեմ և նշեց, որ քրեական գործն՝ ըստ առարկայական ընդդատության, հարկավոր է փոխանցել ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

(…)

Դատարանն արձանագրում է, որ Սյուզաննա Խաչատրյանի նկատմամբ կազմված մեղադրական եզրակացությամբ և նրան ներկայացված մեղադրանքով արձանագրվել է, որ Սյուզաննա Խաչատրյանը իրեն մեղսագրվող հանցավոր

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 2, թերթեր 232-234:

արարքը կատարել է պաշտոնեական լիազորությունների օգտագործելով, մինչդեռ կոռուպցիոն հանցանքների ցանկի համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասը համարվում է կոռուպցիոն հանցանք, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Դատարանը սույն քրեական վարույթով հիմնական դատաքննության ընթացքում իրականացված պատշաճ դատաքննության արդյունքում՝ հետազոտելով համապատասխան ապացույցները, եկել է հիմնավորված եզրակացության առ այն, որ սույն քրեական վարույթով վարույթն իրականացնող մարմնի կողմից մեղադրական եզրակացության մեջ կիրառված «պաշտոնեական լիազորություններ» արտահայտությունը համապատասխանում է «իշխանական կամ ծառայողական լիազորություններ» հասկացությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ հիշյալ քրեական վարույթով մեղադրյալին վերագրվում է կոռուպցիոն հանցագործություն, ինչպես նաև պաշտպանության կողմն առարկել է վարույթը շարունակելու դեմ՝ Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ1/094001/24 քրեական գործն ըստ առարկայական ընդդատության պետք է փոխանցել ՀՀ հակակոռուպցիոն դատարան: (…)»[2]*:*

7. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հունիսի 11-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանի անհամաձայնության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում անձի կողմից իր լիազորությունների գործադրմամբ իրեն վստահված գույքը հափշտակելու բոլոր դեպքերում արարքը պետք է որակել որպես ծառայողական լիազորություններն օգտագործելով վստահված գույքի հափշտակություն: Այսինքն, նման մոտեցման պարագայում ստացվում է մի իրավիճակ, որ որևէ անձի երբևէ չի կարող մեղսագրվել վստահված գույքի հափշտակության հասարակ հանցակազմի կատարում, ինչը ոչ միայն չի բխում առկա օրենսդրական ձևակերպումներից, այլև հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումներին:*

---

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 160-162:

(…)

Հարկ է փաստել, որ Սյուզաննա Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ներկայացված մեղադրանքում, առկա չէ որևէ ձևակերպում առ այն, որ վերջինս իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքները կատարել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, այլ ընդամենն առկա է ձևակերպում այն մասին, որ հանդիսանալով «Զոն Օյունջյան» կրթամշակութային հասարակական կազմակերպության և «Նորավանք սպորտային ակումբ» ՍՊ ընկերության հաշվապահը և օգտվելով այն հանգամանքից, որ իր պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս հնարավորություն է ունեցել տնօրինելու ընկերությունների բանկային հաշվեհամարները, առանց ընկերությունների նախագահ Արմեն Սերգեյի Լիսիկյանի թույլտվության և գիտության, ընկերությունների հաշվեհամարներին առկա գումարներն իր անձնական հաշիվներին փոխանցելու եղանակով հափշտակել է «Զոն Օյունջյան» կրթամշակութային հասարակական կազմակերպության և «Նորավանք սպորտային ակումբ» ՍՊ ընկերության առանձնապես խոշոր չափերով գումարը, մինչդեռ Դատարանը պարտավոր է վարույթի քննությունն իրականացնել անձին ներկայացված մեղադրանքի սահմաններում, իսկ անձին ներկայացված մեղադրանքում պետք է հստակ ձևակերպվի ինչպես վերջինիս մեղսագրվող ենթադրյալ արարքը, այնպես էլ բոլոր ծանրացնող հանգամանքները:

Բացի այդ, Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հիմնական դատաքննության ընթացքում հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության, ապա կողմերի համաձայնությամբ դատարանը շարունակում է վարույթը: Կողմերից մեկի առարկության դեպքում վարույթը որոշմամբ փոխանցվում է ըստ ընդդատության:

Նշված համատեքստում հարկ է փաստել, որ թիվ 08175823 քրեական վարույթով նախաքննությունն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում:

Այնուհետև՝ նախաքննության ավարտից հետո քրեական գործն ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան և նախնական դատաքննության փուլում քննարկման առարկա է դարձվել նաև վարույթի ընդդատության հարցը, սակայն այն ըստ առարկայական ընդդատության ուղարկելու հիմքեր առկա չեն եղել, Դատարանը ևս նման հիմքեր չհայտնաբերելով շարունակել է գործի ըստ էության քննությունը:

Բացի այդ, նշված քրեական գործով անցում է կատարվել հիմնական դատաքննության փուլ, հարցաքննվել են մեղադրական եզրակացության հիմքում դրված ապացույցները՝ հարցաքննվել են վկաները, հետազոտվել են գրավոր ապացույցները, հարցաքննվել է մեղադրյալը, որից հետո միայն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը եկել է եզրակացության առ այն, որ նշված քրեական վարույթով վարույթն իրականացնող մարմնի կողմից մեղադրական եզրակացության մեջ կիրառված «Պաշտոնեական լիազորություններ» արտահայտությունը համապատասխանում է «իշխանական կամ ծառայողական լիազորություններ» հասկացությանը:

Նշվածի համատեքստում հարկ է արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծության արդյունքում, պարզ է դառնում որ, նշված հոդվածով կատարված ձևակերպումը, այն որ՝ եթե հիմնական դատաքննության ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության, իրենից ենթադրում է ի հայտ եկած այնպիսի փաստ, որի ի հայտ գալը հիմք է հանդիսանում վարույթն ըստ ընդդատության փոխանցելու համար, սակայն տվյալ դեպքում Դատարանը վերլուծելով մեղադրյալ Սյուզաննա Խաչատրյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ կատարված «Պաշտոնեական լիազորություններ» արտահայտությունը, եկել է եզրահանգման դրա՝ «իշխանական կամ ծառայողական լիազորություններ» հասկացությանը համապատասխանելու վերաբերյալ, այն պայմաններում, երբ քրեական վարույթն Առաջին ատյանի դատարան ստանալուց հետո, նույն մեղադրանքի պայմաններում, նախնական դատաքննության ընթացքում քննարկման առարկա դարձնելով վարույթն ըստ ընդդատության փոխանցելու հարցը, գտել է, որ նման հիմքեր առկա չեն:

Պետք է նշել նաև, որ այդպիսի հիմքեր չեն տեսել նաև նախաքննական մարմինը և նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը՝ ինչպես նախաքննության, այնպես էլ վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելիս:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0126/01/25 (ԵԴ1/0940/01/24) քրեական վարույթը ենթակա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին՝ հաշվի առնելով, որ այն չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ, ուստի անհրաժեշտ է թիվ ՀԿԴ/0126/01/25 քրեական գործն ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝ ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար: (...)»[3]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0940/01/24 (ՀԿԴ/0126/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»*:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի*

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 180-185:

կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[4]*:*

Միևնույն ժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]*:*

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար: (…)»[6]*:*

Նույն որոշմամբ, Վճռաբեկ դատարանը, վերլուծելով 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը, արձանագրել է հետևյալը. «*[Ե]թե ընդդատության կարգի խախտումը հայտնաբերվել է դատական քննության ժամանակ և կողմերը չեն առարկում, որ գործի քննությունը շարունակվի այդ դատարանում, դատարանն իրավասու է գործը թողնել իր վարույթում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մաս):*

Այս կանոնը պետք է մեկնաբանվի ընդդատության հիմնարար արժեքի իրավական նշանակությանը համապատասխան. այն չպետք է հիմք հանդիսանա առերևույթ կամայականության համար: Այսինքն՝ այս կանոնը պետք է կիրառվի միայն այն ժամանակ, երբ վարույթն իրականացնող դատարանը գործը վարույթ ընդունելիս չգիտեր և չէր կարող իմանալ, որ տվյալ գործն իրեն ընդդատյա չէ: Դա վերաբերում է միայն այն դեպքերին, երբ սխալ ընդդատության մասին վկայող հանգամանքն ի հայտ է եկել դատաքննության ընթացքում ապացույցների հետազոտման արդյունքում: Իսկ եթե սխալ ընդդատության մասին վկայող հանգամանքները քրեական գործը դատարան ուղարկելիս արդեն իսկ եղել են գործի նյութերում, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասը չի կարող կիրառվել: Դրա փոխարեն պետք է կիրառվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասը և գործն ուղարկվի ըստ ընդդատության:

Եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասն ավելի լայն մեկնաբանվի, ապա դատարանին հնարավորություն կտրվի առանց իրավական հիմքի վարույթ իրականացնել, որից հետո փորձել օրինականացնել այդ առանց իրավական հիմքի վարույթը:

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

Ուստի, երբ ընդդատության խախտումն ի սկզբանե ակնհայտ է, ապա վարույթն իրականացնող դատարանը պարտավոր է գործն ուղարկել ըստ ընդդատության: Իսկ երբ ընդդատության սխալ լինելու փաստն ի հայտ է եկել ապացույցների դատական հետազոտման արդյունքում, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված ընթացակարգի գործադրմամբ գործը կարող է մնալ այն քննող դատարանի վարույթում: (…)»[7]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 2. Եթե հիմնական դատաքննությունների ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության,*

[7] Տե՛ս նույն որոշումը, կետ 21:

ապա կողմերի համաձայնությամբ դատարանը շարունակում է վարույթը: Կողմերից մեկի առարկության դեպքում վարույթը որոշմամբ փոխանցվում է ըստ ընդդատության: (…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, արձանագրելով, որ հիմնական դատալսումների ընթացքում հետազոտելով համապատասխան ապացույցները, եկել է հիմնավորված եզրակացության առ այն, որ սույն վարույթով մեղադրական եզրակացության մեջ առկա՝ «պաշտոնեական լիազորություններ» եզրույթը համապատասխանում է «իշխանական կամ ծառայողական լիազորություններ» հասկացությանը, ինչպես նաև այն, որ պաշտպանության կողմն առարկել է վարույթի քննությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում շարունակելու դեմ, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան փոխանցելու մասին[8]:

[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

- Հակակոռուպցիոն դատարանը գտել է, որ Ս.Խաչատրյանին ներկայացված մեղադրանքում առկա չէ որևէ ձևակերպում առ այն, որ վերջինս իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքները կատարել է «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն» օգտագործելով:

Հակակոռուպցիոն դատարանը նշել է նաև, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, վերլուծելով մեղադրյալ Ս.Խաչատրյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ առկա՝ «պաշտոնեական լիազորություններ» ձևակերպումը, գտել է, որ մեղադրյալին վերագրվում է կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցանքի կատարում, այն պայմաններում, երբ քրեական վարույթն առաջին ատյանի դատարան ստացվելուց հետո, նույն մեղադրանքի պայմաններում, նախնական դատալսումների ընթացքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը վարույթն իրեն ընդդատյա չլինելու հիմքեր չի արձանագրել[9]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ մեղադրյալ Ս.Խաչատրյանին ներկայացված մեղադրանքի ձևակերպումից պարզ է դառնում, որ վերջինս, հանդիսանալով «Ձոն Օյունջյան» կրթամշակութային հասարակական կազմակերպության և «Նորավանք սպորտային ակումբ» ՍՊ ընկերության հաշվապահը և ***օգտվելով այն հանգամանքից, որ իր պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս հնարավորություն է ունեցել տնօրինելու ընկերությունների բանկային հաշվեհամարները***, առանց ընկերությունների նախագահի թույլտվության և գիտության, ընկերությունների հաշվեհամարներին առկա գումարներն իր անձնական հաշիվներին փոխանցելու եղանակով ենթադրաբար կատարել է իրեն վստահված գույքի առանձնապես խոշոր չափերի հափշտակություն:

---

[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Այլ կերպ՝ Ս.Խաչատրյանն իրեն վստահված գույքի հափշտակությունն իրականացրել է՝ ***օգտվելով ընկերության հաշվապահի՝ իրեն վերապահված լիազորություններից,*** որպիսի ենթադրյալ հանցանքն իր բնույթով կոռուպցիոն է: Հետևաբար, գտնում ենք, որ առկա է սույն վարույթը Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու հիմքը:

16. Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասի՝ նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ **անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության**: Մինչդեռ, **Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին որոշում է կայացրել հիմնական դատալսումների ընթացքում՝ վերոնշյալ կանոնի խախտմամբ**: Նման պայմաններում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը չի հիմնավորել նաև, թե ինչ նոր փաստեր են ի հայտ եկել հիմնական դատալսումների ընթացքում, որոնք հայտնի չէին նախնական դատալսումների ընթացքում, և կարող էին հիմք հանդիսանալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով վարույթն ըստ ընդդատության փոխանցելու համար, հաշվի առնելով, որ մեղադրյալ Ս.Խաչատրյանին ներկայացված մեղադրանքի ձևակերպումն ինքնին բավարար էր փաստելու, որ վերջինիս վերագրված ենթադրյալ հանցանքը կոռուպցիոն բնույթի է:

Արձանագրելով հանդերձ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից վերոնշյալ կանոնի խախտմամբ վարույթն ըստ ընդդատության փոխանցելու հանգամանքը, այնուամենայնիվ հիմք ընդունելով անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակությունը և դրա՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս հանդիսանալը, գտնում ենք, որ վերոնշյալը չի կարող հիմք հանդիսանալ սույն վարույթի քննությունն ընդդատության կանոնների խախտմամբ շարունակելու համար:

17. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0940/01/24 (ՀԿԴ/0126/01/25)

քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր չէ:

18. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/0940/01/24 (ՀԿԴ/0126/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Սյուզաննա Ռոբերտի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով թիվ ԵԴ1/0940/01/24 (ՀԿԴ/0126/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ